ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«07» մայիսի 2010թ. N - Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ

ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը՝ 17 երեխաների մայր Անթառամ Կիրակոսյանի որդիներ՝ Աբել Մամիկոնի Ղազարյանին և Իսրայել Մամիկոնի Ղազարյանին, Բրազիլիայի Ջյոնվիլ միջազգային մրցույթի ոսկե մեդալակիր, «Սպարտակ» բալետում Սպարտակի դերակատարման համար ՀՀ Նախագահի կողմից Մ. Խորենացու շքանշանով պարգևատրված՝ Ռուբեն Արտավազդի Մուրադյանին Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանները անհատույց օտարելու մասին և ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի հ.55-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով և 28-րդ կետի 4-րդ ենթակետով՝

Երեւան քաղաքի ավագանին *որոշում է.*

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին.

1) Երևան քաղաքի սեփականություն համարվող Երևանի Հ/Ա թաղամասի Ա. Բաբաջանյան փողոցի հ.26/5 շենքի 6-րդ հարկի հ.26՝ մեկ սենյականոց և 10-րդ հարկի հ.50՝ երկու սենյականոց բնակարանները (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 23.09.2009թ. հ.2675923 վկայական) սեփականության իրավունքով անհատույց (նվիրատվությամբ) օտարել համապատասխանաբար՝ Աբել Մամիկոնի Ղազարյանին (անձնագիր՝ AF 0495864 տրված 15.03.2002թ. 008-ի կողմից) և Իսրայել Մամիկոնի Ղազարյանին (անձնագիր՝ AB 0534589 տրված 09.11.1980թ. 014-ի կողմից):

2) Երևան քաղաքի սեփականություն համարվող Երևանի Հ/Ա թաղամասի Ա.Բաբաջանյան փողոցի հ.26/4 շենքի 5-րդ հարկի հ.24՝ երկու սենյականոց բնակարանը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 29.09.2009թ. հ.2675976 վկայական) սեփականության իրավունքով անհատույց (նվիրատվությամբ) օտարել Ռուբեն Արտավազդի Մուրադյանին (անձնագիր՝ AG 0497552 տրված 04.06.2005թ. 057-ի կողմից):

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

<<Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն անհատույց օտարելու մասին>> Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

Սույն որոշման նախագծով բնակարաններ են հատկացվում 17 երեխաներ մեծացրած Անթառամ Կիրակոսյանի բնակարանային ծանր պայմանները բարելավելու խիստ անհրաժեշտությունը և Բրազիլիայի Ջոնվիլ միջազգային մրցույթի մրցանակակիր, Յուրի Գրիգորովիչի անվան երկրորդ միջազգային մրցույթի ոսկե մեդալակիր, <<Սպարտակ>> բալետում Սպարտակի դերակատարման համար ՀՀ Նախագահի կողմից Մ. Խորենացու շքանշանով պարգևատրված Ռուբեն Մուրադյանին՝ Մայր Հայրենիքում ստեղծագործական նորանոր հաջողություններ և վերելքներ ապահովելու համար:

Անթառամ Կիրակոսյանի բազմանդամ ընտանիքը բնակվում է Հ/Ա թաղամասի Ա. Բաբաջանյան փողոցի հ.163 շենքի հ.26 և հ.4՝ 94.0քմ բնակելի մակերես ունեցող բնակարաններում: Նշված բնակարաններում ներկայումս բնակվում են Ա. Կիրակոսյանը, ամուսինը, 7 տղաները, որոնցից մեկն ամուսնացած է և ունի 3 երեխա, հարսը և 2 աղջիկները (ընդամենը 15 անձ): Ներկա պահին անչափահաս են մեկ տղան ծնված՝ 04.09.1992թ. և մեկ աղջիկը ծնված 08.12.1994թ.: Հ/Ա թաղամասի Ա. Բաբաջանյան փողոցի հ.26/5 շենքի հ.26՝ մեկ սենյականոց բնակարանը Աբել Մամիկոնի Ղազարյանին (ծնված 1985թ.), իսկ Ա. Բաբաջանյան փողոցի հ.26/5 շենքի հ.50՝ երկու սենյականոց բնակարանը Իսրայել Մամիկոնի Ղազարյանին (ծնված 1980թ.) հատկացնելու խնդրանքներ են ներկայացրել Անթառամ Կիրակոսյանը և նրա ամուսինը՝ Մամիկոն Ղազարյանը, այն հիմնավորելով տղաներին շուտով ամուսնացնելու, ինչպես նաև ունեցած և հատկացվող բնակելի մակերեսները անձերի թվին համապատասխան հավասարաչափ օգտագործելու հանգամանքներով:

Բազմանդամ ընտանիքի կողմից 2006 թվականից հետո բազմաթիվ դիմումներ են հասցեագրվել վերադաս կառավարման տարբեր մարմիններին՝ բնակարաններ կամ բնակելի տուն կառուցելու համար, անհատույց սեփականության իրավունքով հողամաս հատկացնելու մասին, սակայն հարցին լուծում չի տրվել:

Ռուբեն Արտավազդի Մուրադյանը Երևան քաղաքում որևէ բնակելի տարածության նկատմամբ չունի սեփականության իրավունք և ներկայումս նրա ընտանիքը՝ ինքը, հայրը, մայրը երկու եղբայրները բնակվում են վարձակալական հիմունքներով տրվող բնակարանում:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ